



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

15 հունիսի 2015թ.

N 9

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ
Ա Շ Խ Ա Տ Ո Ղ Ն Ե Ր Ի Ն Հ Ա Շ Վ Ա Ր Կ Վ Ո Ղ Պ Ա Ր Գ Ե Վ Ա Տ Ր Մ Ա Ն Գ Ո Ւ Մ Ա Ր Ն Ե Ր Ի
Հ Ա Ր Կ Մ Ա Ն Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Ն

ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, աշխատավարձը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:

Օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության համաձայն, աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ աշխատավարձը:

Օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն, հիմնական աշխատավարձը օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտով, աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար սահմանված վարձատրության չափն է:

Օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերության համաձայն, պարգևատրումը օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված կարգով և չափերով աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է:

Օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եկամուտ է համարվում աշխատանքային կամ քաղաքացիաիրավական


պայմանագրերի շրջանակներում կամ ցանկացած այլ հիմքով հարկ վճարողի ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) գույքը, ինչպես նաև բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտները:

«Կառավարության 08.08.2013թ. «Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին» N 853-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետի համաձայն, աշխատավարձ և դրան հավասարեցված վճարում են հանդիսանում նաև պարգևատրման գումարները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից):

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Եթե ընթացիկ ամսում գործատուի կողմից ընդունված իրավական ակտով հաշվարկվում է այդ ամսվան նախորդող ժամանակահատվածներում աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության համար պարգևատրման գումարներ, ապա այդ գումարներից եկամտային հարկը հաշվարկվում է հաշվի առնելով ընթացիկ ամսվա աշխատավարձի գումարը՝ միասնականացված կարգով, և արտացոլվում է այդ (ընթացիկ) ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկում:

Օրինակ, 2015 թվականի փետրվարի 12-ին գործատուի ընդունված հրամանով հաշվարկվում է տարեկան արդյունքներով աշխատանքային պարտականությունները գերազանց կատարած աշխատողներին պարգևատրման գումարներ: Եկամտային հարկը հաշվարկելու նպատակով նշված պարգևատրման գումարները միասնականացվում են այդ աշխատողների փետրվար ամսվա աշխատավարձի գումարների հետ և արտացոլվում փետրվար ամսվա համար մինչև մարտի 20-ը ներկայացվող եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկում:


Պ. Բանչևարյան